Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի <<Սոլակի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի կերպարվեստի /7 դասաժամ/, տեխնոլոգիայի /տղաների խումբ 4 դասաժամ/ և ֆիզկուլտուրայի /11 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղերի համար :

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայցնել՝

- դիմում՝ (Ձև 1), մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ/դիպլոմ/
- անձը հաստատող փաստաթուղթ,
- <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը/առկայության դեպքում/,
- ինքնակենսագրություն (Ձև 5) ,
- այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր/առկայության դեպքում/,
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2021թ-ի սեպտեմբերի 08 -ից մինչև 2021թ-ի սեպտեմբերի 22 -ը ներառյալ , ամեն օր՝ ժամը 10^{00}-ից 15^{00}-ը , բացի շաբաթ , կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Մրցույթը տեղի կունենա 2021 թ սեպտեմբերի 24-ին ժամը 14 ^{00}-ին ՀՀ Կոտայքի մարզի Սոլակի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ *(094 200-117)* հեռախոսահամարով: